

ԼԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Մեր անվանի գրականագետ, բանասեր և քառերագետ Լևոն Հովհաննեսի Հախվերդյանն իր 50-ամյա գործունեության ընթացքում լույս է բերել բազմաթիվ մեծ ու փոքր գրքեր և հարյուրավոր հոդվածներ գրականության, քառերոնի և լեզվի վերաբերյալ: Իհարկե, այդ զբոսն ունի հավասարաբարձր չեն և ոչ էլ դրանց անսովոր մեծ քանակն է որոշում հեղինակի



գրականագիտական-արվեստաբանական և ակադեմիական ու կշիռը: Տարբեր նախասիրություններ ունեցող բնավորություն՝ նա գրել է ոչ միայն շատ, այլև արվեստի և գրականության ամենատարբեր երևույթների մասին:

Հախվերդյանն ունի բազմաթիվ դրոշմեր և հոգվածներ, որոնք միտք են շարժել ժամանակին, եղանակ են ստեղծել գրականության և արվեստաբանության մեջ, լայն արձագանք են գտել և այսօր էլ արժանի են բարձր գնահատականի:

1955-ին լույս տեսավ Լ. Հախվերդյանի առաջին՝ «Մեր օրերի հայ դրամատուրգիան» մենագրությունը (հեղինակի քննադատական դիսերտացիան): Այս աշխատության մեջ արված է հետազոտության հայ քառերագրության ամբողջական պատկերը: Գրքի առավել արժեքավոր կողմը տեսական է, այն, որ այստեղ կոնֆլիկտը դիտվում է իբրև դրամատուրգիական երկի հիմք և հենարան, իբրև գործողության շարժիչ ուժ. մի բան, որ այնքան էլ հեշտ չէր անել

«անկոնֆլիկտ դրամատուրգիայի» տեսության ծաղկման ժամանակներում:

1959-ին լույս տեսավ «Սուրեն Քաչարյանի արվեստը» աշխատությունը, առաջին դիրքը զեղարվեստական խոսքի նշանավոր վարպետի և առհասարակ ասմունքի արվեստի մասին: Սա Սուրեն Քաչարյանի հայերեն ծրագրերի արվեստաբանական քննադատությունն է, բանավոր խոսքի արվեստի առանձնահատկությունների (հնչերանգ, շեշտ, տեմպ, ռիթմ, պատկեր) և հնչյունային հայերենի յուրահատկությունների քաջահայտումով:

1962-ին լույս տեսավ մեր հոբելյարի «Կլասիկան և մեր օրերը. վարդան Աճեմյանի արվեստը» մենագրությունը, ամենից ծավալուն ուսումնասիրությունը, որ գրվել է հայ բեմադրական արվեստի մասին: Իմանալու համար, թե նշանավոր բեմադրիչն ինչպես է արդիական շունչ տվել հայ դասականների գործերին, հայ քառերոնի ապագա գործիչները պետք է դիմեն այս գրքին, որ ամենից լավ քննադատ է «Արվեստական Արվեստ» հանդեսը. «Գիրքը լի է գրականագիտական ուղագրով, երբեմն հանդուգն եզրակացություններով, ավելի շատ այն գրված է քառերագիտական և գրականագիտական այնպիսի նուրբ համադրությամբ, որ շատ հշեհին կարող է հաջողվել: ...Այս առումով աշխատությունն ունի կրկնակի արժեք՝ գրականագիտական և քառերագիտական, և դժվար է դրանցից որևէ մեկին նախադասություն տալ: Աճեմյանը գտել է արժանի մեկնաբան, հայ դասական հեղինակները՝ իրենց գնահատողին» («Սովետական արվեստ», 1963, № 12):

1967-ին լույս տեսավ «Հայ սովետական բատրոնի պատմություն» մեծածավալ գիրքը, որի դերասանական արվեստին և դերասաններին վերաբերող բոլոր էջերը դրել է Լ. Հախվերդյանը: Դերասանների ստեղծագործական դիմանկարները ներկայացնող այդ էջերը ստացան այսպիսի գնահատական. «Թատրոնի պատմության մեջ զուցե չկա ավելի հմայիչ ու հետափրփիր երևույթ, քան այդ պատմության հերոսի՝ դերասանի կերպարն ու հակատագիրը: Եվ այս գրքում յուրաքանչյուր այդպիսի կերպար ոչ միայն իր տեղն ու իմաստը, այլև իր, միայն իրեն հատուկ հմայքն ունի» («Սովետական Հայաստան», 2 դեկտեմբերի 1967):

Թումանյանի ստեղծագործությունը Լ. Հախվերդյանին գրադեցրել է վաղուց ի վեր: Մի շարք արժեքավոր հոդվածներից հետո Լ. Հախվերդյանը 1966-ին լույս ընծայեց «Թումանյանի աշխարհը» ծավալուն մենագրությունը (հեղինակի դոկտորական դիսերտացիան): Աշխատության նկատված արժանիքներն են գրողի ստեղծագործության և ապրած ժամանակի, Թումանյանի ստեղծած երկերի և հայ միջնադարյան գրականության կապերի, նրա երկերի դրամատիկական էությունը ներառող բացահայտումները (այստեղ էլ, երևի գրականագետն ու քառերգետը հանդիպել են միմյանց): Սա, թերևս, հեղինակի առավել երևացող ներդրումն է մեր գրականագիտության մեջ: Չափազանցություն չի լինի ասել, որ այս գիրքն ընդլայնեց Թումանյանի գրված տեղը հայ հասարակական գիտակցության մեջ, առաջադրեց մի նոր հայացք՝ նրա անձի և ստեղծագործության նկատմամբ: Հստ երևույթին, դա է պատճառը, որ հայտնի գրականագետներ Խորեն Սարգսյանը, Սողոմոն Սողոմոնյանը, Սուրեն Աղաբաբյանը, Նշան Մուրադյանը և ուրիշներ հարկ համարեցին գրել այդ գրքի մասին:

Լ. Հախվերդյանի գրվածքների ընթերցողը չի կարող նկատած չլինել, որ նա սենսուսն նպատակ ունի գրել պարզ, մատչելի, գրավիչ, այնպես, որ գիրքը գեղագիտական հաճույք պատճառի ընթերցողին, իր ռեզով, ձևով, կառուցվածքով հրապուրի նրան: Դա է մղել հեղինակին, որ նա իր գրականագիտական աշխատություններից մի քանիսը գրի երկխոսության ձևով, իբրև գրույց գրողի և գրականագետի միջև: Դրանք են՝ «Թումանյանի կյանքը» (1969), «Իսահակյանի կյանքն ու գործը» (1974), «Թումանյանը և իր ժամանակը» (1994): Սրանցից երկրորդը, ինչպես «Թումանյանի աշխարհը», լույս են տեսել նաև Մոսկվայում, ուսեռեն: Այս գիրքը ներկայացնում է Իսահակյանի հուզական բովանդակությամբ հագեցած կյանքը՝ ստեղծագործության զլխավոր շեշտերով:

Հայ բատրոնի պատմության ամենահարուստ շրջանն ընդգրկում է 1901—1920 թվականները, մեր դասականների Շիրվանզադեի և Լևոն Շանթի, մեծ դերասաններ Սիրանույշի և Հովհաննես Աբելյանի ստեղծագործության ամենալավ ժամանակները: Երբևէ հատուկ ուսումնասիրության առարկա չդարձած այս շրջափուլին է նվիրված Լ. Հախվերդյանի «Հայ բատրոնի պատմություն. 1901—1920» մենագրությունը, որ արժանացավ Հայաստանի պետական մրցանակի: Դիրքն ամենից ավելի բարձր գնահատեց գրականագետ և քառերգետ Դառնիկ Ստեփանյանը, որի հոդվածն ավարտվում է այսպես. «Ամփոփելով գրքից ստացած մեր տպավորությունները, անվարան կարող ենք ասել, որ հրապարակի վրա է գրվել ծանրակշիռ մի հետադարձություն, որն իր մասնագիտական մակարդակով, քառերգիտական հմուտ վերլուծություններով, ընտիր լեզվով և գեղագիտական ընդհանրացումներով նոր խոսք է հայ քառերգիտական մտքի պատմության մեջ» («Հայրենիքի ձայն», 18 մարտի 1981):

Ապրած տարիների և, ինչու՞ չէ, նաև քախտի քերամով (քանի որ դա իսկապես մեծ բախտ է) Լ. Հախվերդյանն անձնական ծանոթություն, շփումներ, նույնիսկ մտերմություն է ունեցել մեր գեղարվեստական մշակույթի մեծերի հետ՝ Ավետիք Իսահակյան, Դուրգեն Մանսուրի, Վարդան Անեմյան, Սուրեն Քոչարյան, Ռաֆայել Իսրայելյան, Պարույր Սևակ: Նրանք հարստացրել են իր կյանքը, խորունկ հետք թողել իր ներաշխարհի ու նկարագրի վրա: Պարույր Սևակի հետ ունեցած տարիների մտերմությունը անդիմադրելի մղում տվեց Լ. Հախվերդյանին ստեղծելու «Պարույր» խոհագրությունը (Լսես): Դիրքը լույս է տեսել երկու անգամ՝ 1981-ին՝ Բեյրութում, 1987-ին՝ Երևանում: Դրքի մասին լույս տեսած հոդվածներից մեկը պատկանում է Անդրանիկ Ծառուկյանին. «Շատ գրված է Պարույր Սևակի մասին ու դեռ շատ կգրվի: Բայց ոչ մեկ տեղ Պարույրը այնպես հարազատ է ու կենդանի, ապրող ու շնչող, որքան Լևոն Հախվերդյանի այս գիրքին մեջ: Դրականագետները դեռ շատ պիտի վերլուծեն ու տարալուծեն բանաստեղծին գրականությունը, վեր առնեն անոր գործին այս կամ այն հատկանիշները, բայց ով որ ուզե տեսնել ամբողջական Պարույրը իր իսկությամբ մեջ, պիտի դառնա այս գիրքին» («Նաիրի», շաբաթաթերթ, Բեյրութ, 15 հունվարի 1982):

Շատ լայն արձագանք գտավ Լ. Հախվերդյանի հատկապես «Զրույցներ լեզվի մասին» գիրքը: Սա երեք հրատարակություն է ունեցել (1982, 1988, 1993). ամենից շատ հոդվածներ այս գրքի մասին են հրապարակվել: Այստեղ շատ տվյալներ են ի մի եկել, որ ունեցել է հեղինակը. տասնյակ տարիներ հայերեն շարադրելու փորձը, քատրոններում հեշտով քանավոր հայերենի՝ ընթանալու խոսքի ունկնդրի փորձը, վերջապես, թարգմանչի փորձը (նա թարգմանել է երեք անգամ հրատարակված «Հին Հունաստանի լեզուներն ու առասպելներ», Ստեֆան Ցվայգի «Մարդկության աստեղային ժամեր», Սունդուկյանի անվան քատրոնում և այլուր բեմադրված մի շարք պիեսներ): Այս ամենի համադրության արդյունքն է այս գիրքը, որ կարողացավ է թեթև ու անեղից, բայց ստեղծվել է տարիների տեղաշարժում: Շատ ժամանակ է պետք եղել հեղինակին, որպեսզի արդի գրավոր և բանավոր հայերենում ի հայտ բերի լեզվական այնպիսի իրողություններ, որոնք չէին գիտվել ու բնութագրվել: Զրույցների ամենից ուշագրավ էջերը վերաբերում են հայերենի ռեալի, հայեցի լեզվամտածողության հարցերին: Այս գիրքը հեղինակի ներդրումն է կիրառական լեզվաբանության մեջ, որ հարստացնում է մեր պատկերացումը ժամանակակից հայերենի վերաբերյալ, նպաստում մայրենի լեզվի յուրացմանը, հայերեն գրավոր և, մանավանդ, բանավոր խոսքը հյուսելու դժվար արվեստին: Գրքի մասին լույս տեսած բազմաթիվ հոդվածներից մեկի հեղինակ Ռուբեն Զարյանը նշել է. «Այս գիրքը վերահրատարակվելու է յոթ տարին մեկ և այնպիսի ֆանակով, որ ամեն մի հայ ընթերցող, պատանի լինի թե մեծահասակ, ունենա իր սեփական օրինակը, որովհետև լիովին արժանի է սեղանի գիրք լինելու» (Երեկոյան Ներսիս, 18 փետրվարի 1987):

Լեոն Հախվերդյանի՝ զուտ գիտական (գրականագիտական և արվեստաբանական) վաստակը դասական գրողներից Թումանյանի և Իսահակյանի ստեղծագործության, ժամանակակից գրողներից և արվեստագետներից՝ Սուրեն Քաչարյանի, Վարդան Ահմեյանի, Գուրգեն Մահարու, Հրանտ Մաթևոսյանի, Պարույր Սևակի ստեղծագործության մեկնաբանությունն է: Այս սուպեր-հեղինակում մասնավորապես նա ասել է ծանրակշիռ, ինքնատիպ, մնայուն արժեքներ կայացնող խոսք:

Ամբողջական չի լինի Լ. Հախվերդյանի գրեթե կեսդարյա գործունեության պատկերը, եթե աչքի առաջ չունենանք իր մանկավարժական և վարչական աշխատանքը նույնպես: Շատ տարիներ (1965-ից վեր) նա Արվեստի ինստիտուտի քատրոնի քաժնի վարչն է: Այդ տարիներին քաժնում ստեղծվել է հրատարակվել են քատրոնագիտական մի ամբողջ շարք արժեքավոր աշխատություններ: 1987-ից նա ՀԳԱ արվեստի ինստիտուտի տնօրենն է: Ինստիտուտի նախնականությունը 1988-ին Խաչիկյանի կայացրած հայ արվեստին նվիրված հինգերորդ միջազգային մեծ գիտաժողովը, 1989-ին Թիֆլիսում կայացրած հայ-վրացական մշակութային կապերին նվիրված միջազգային պատմական գիտաժողովը:

Լ. Հախվերդյանը զեկուցումներ է կարդացել և ելույթներ ունեցել 1950-ից ի վեր Հասարակական կայացած գրողների և քատրոնական գործիչների բոլոր համագումարներում, բանախոսություններով հանդես է եկել հայ սփյուռքի կրթական և մշակութային հաստատություններում (Կալկաթա, Քեյրոս, Հայնա, Կահիրե, Մոնթրեալ, Միլան, Լոս Անջելես, Ռոստոմ, Նյու-Յորք և այլուր): Բանավոր խոսքն ակնառու տեղ է գրավում նրա գործունեության մեջ:

Գուցե ի վնաս զուտ գիտական աշխատանքի և տկարամիտական նկարագրի, նա չի եղել կարիներտային մասնագետ: Խառնվածքի քելադրանքով նա միջամուխ է եղել երկրի ֆաղափական կյանքին, հատկապես վերջին տասնամյակում: Գրականագետը հանդես է եկել ֆաղափական-հրա-արախոսական հոդվածներով («Ինչ պետք չէ անել», «Ինչու հիշաք շասել», «Մենք ինչքան կարող ենք մեզ վնասել», «Զե՛մ ուզում», «Որտեղ է ապրել այս «ազրեստ» ժողովուրդը» և այլն). արժանանալով ժողովրդի համար կենսական կարևորություն ունեցող խնդիրներ: Իր գրավոր և բանավոր ելույթներով, առանց զգուշամտության, նա մասնակից է եղել հասարակական կարծիքի ստեղծելու գործին ամեն դեպքում, երբ զգացել է դրա կարևորությունը:

Գիտական և հասարակական գործունեության այս համադրությունն է որոշում Լեոն Հախվերդյանի, իրեն հայ գրականության և արվեստի մեղավաշան մշակի, նկարագրի:

Թող որ մեր անվանի հոբելյարի գրիչն այսուհետև էլ լինի արգասավոր, օգտակար ու հրապուրիչ:

Խ. ՍԱՄՎԵԼՅԱՆ,